

13
4-21

ԿԱՆՈՆԱԳԻՐԻ

Հ. Ս. Խ. Հ.

ԴԱՏԱՐԱՆԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ

343
4-21

ՏՐԵՄ ՏՐ
ՍԵՐԵՎԱՆ
ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
1921

7182

3
21

17 MAY 2013

Հ. Ս. Խ. Հ.

01 MAR 2011

ԴԵԿՐԵՏՆԵՐԻ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ

1924

ԱՊՐԻԼ

№ 4

Ֆ Ա Ն Կ

Հոդ. 23. Կանոնադիրք Հ. Ս. Խ. Հ. Դատարանական ժողովրդ.

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՑՄԻՏԵԻ III ՆԱԽԱԳԱՆ-
ՋԱՆԻ

55. Հ. Ս. Խ. Հ. ԴԱՏԱՐԱՆԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

1923 թ. սեպտեմբերի 23

1. Հաստատել Հ. Ս. Խ. Հ. Դատարանական ժողովրդի Կանոնադիրքը,
վոր ընդունել է Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահ-
ությունը 1923 թ, փետրվարի 27-ին, Արդարադատության Ժո-
ղովրդական Կոմիտեի ատի մուծած փոփոխություններին ու լրա-
ցումներով:

2. Ժամանակավորապես, մինչև Գերագույն Դատարան հիմ-
նելը, նրա ֆունկցիաները հանձնել Հ. Ս. Խ. Հ. վճարեկ Դատա-
րանին:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահ՝

Ս. Համբարձումյան

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Քարտուղար՝

Հ. Տաշյան

Հր. «Խորհրդային Հայաստան»
1923 թ. սեպտեմբերի 29, № 216

Պատվեր № 2609

56941

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Հ. Ս. Խ. Հ. ԴԱՏԱՐԱՆԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ

ՀԱՏՎԱԾ I

ԳԼՈՒԽ I

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Հոդ. 1. Պրոկտորական հեղափոխության նվաճումները պաշտպանելու և պետության շահերը, աշխատավորների ու նրանց միությունների իրավունքները ապահովելու համար՝ Հ. Ս. Խ. Հ. սահմաններում գործում է դատական հիմնարկությունների հետեվյալ միասնական սխեմով.

1. Ժողովրդական Դատարան՝ մշտական ժողովրդական դատավորով.

2. Ժողովրդական Դատարան՝ մշտական ժողովրդական դատավորով և յերկու ժողովրդական ատենակալներով.

3. Գլխավոր Դատարան.

4. Հ. Ս. Խ. Հ. Գերագույն Դատարան:

Հոդ. 2. Հատուկ կատեգորիաների գործերի քննության համար՝ շնորհիվ նրանց հատուկ բարդության և այն հանգամանքի, վոր նրանց քննությունը վորոշ մասնագիտություն և փորձառություն և պահանջում է համաձայն այն նկատառումների, վոր հատուկ կատեգորիաների հանցագործությունները կարող են հատկապես վրտանգավոր լինել Հանրապետության զինվորական ուժի կամ արտեսական բարգավաճման համար՝ Հ. Ս. Խ. Հ. Ժողովրդական Դատարանների միասնական սխեմի հետ՝ ժամանակավորապես գործում են հետեվյալ հատուկ դատարանները. ա) Զինվորական Տրիբունալ, վոր քննում է կարմիր Բանակի ամբուլյանն ու գործությունը վտանգ սպառնացող հանցանքների վերաբերյալ գործերը, բ) Ժողովրդական Դատարանների աշխատավորական նստաշրջանները, վոր քննում են Աշխատանքի Որենսդրության (Աշխ. Որ. 168 և 189 հոդ.) խախտման վերաբերյալ գործերը, գ) Հողային Հանձնաժողովներ՝ հողային գործերի քննության համար և դ) անտեսական խորհրդակցության Իրավարար Հանձնաժողովը, վոր զբաղվում է պետական մարմինների ստացվածային իրավունքներին վերաբերյալ վեճերով:

Աշխատավորական նստաշրջանները կազմվում են ժողովրդական դատավորներից և յերկու մշտական անդամից՝ մեկը Արհմիության և մյուսը Աշխատանքի Ժողովրդական Կոմիտեների ընտրությամբ և գործում են Ժողովրդական Դատարանների կանոնների ընդհանուր հիմունքներով:

Այլ հատուկ դատարանների կազմակերպության ու գործունեության կարգը վորոշվում է այդ դատարանների մասնավոր կանոնադրություններով:

Հոդ. 3. Ժողովրդական դատավորը, վոր գործում է միանձնաբար կամ յերկու ժողովրդական ատենակալների հետ միասին, կատարում է իր պարտականությունները՝ իրեն հանձնած գավառական կամ քաղաքային շրջանի սահմաններում: Այդ սահմաններում նա պատասխանատու է իր գործունեության համար բացառապես դատական կարգով կամ Հ. Ս. Խ. Հ. վեճադատ դատական հիմնարկությունների առաջ ստորեվ սահմանված կարգով:

Հոդ. 4. Գլխավոր Դատարանը տարածում է իր գործունեությունը ամբողջ Հանրապետության վրա և բացի յուր իրավասությունը վերաբերյալ գործերից՝ հսկում է այն բոլոր ժողովրդական դատարանների վրա, վոր գործում են նրան հանձնված շրջանում:

Հոդ. 5. Հ. Ս. Խ. Հ. Գերագույն Դատարանի պարտականություններն են՝ Հ. Ս. Խ. Հ. անխախտ բոլոր դատական մարմինների դատական վերահսկողությունը, քննություն՝ վճռաբեկության կարգով, Գլխավոր Դատարանի վճռած գործերի և հսկողության կարգով Հանրապետության ամեն մի դատարանի վճռած բոլոր գործերի և վորպես առաջին աստիճանի դատարանի՝ քննություն հատուկ պետական նշանակություն ունեցող գործերի, համաձայն այդպիսի գործերի Գերագույն Դատարանի իրավասությունը որենքով սահմանված յենթակայության:

Հոդ. 6. Ընդհանուր որինապահության հսկողության, նախաքննությունների և հետաքննության անմիջական վերահստության և դատարանում ամբաստանելու համար՝ գործում է պետական դատախազությունը:

Հոդ. 7. Իրենց հանձնված շրջանների սահմանում՝ դատախազների և Գլխավոր Դատարանի հսկողության ներքո, դատական քննությունների յենթակա հանցագործությունների նախաքննության համար՝ գործում են ժողովրդական քննիչները:

Հոդ. 8. Աշխատավորներին քաղաքացիական վեճերի լուծման համար իրավաբանական ոգնություն ցույց տալու և քրեական դատարանում նրանց պաշտպանությունն ապահովելու նպատակով՝ Գլխավոր Դատարանին առընթեր և նրա հսկողություն ներքո՝ գործում է պաշտպանների կոլեգիան:

Հոդ. 9. Դատական վորոշումներն ի կատար ածելու համար Գլխավոր Դատարանին և Ժողովրդական Դատարաններին առընթեր գործում են դատական կատարածուներ, իսկ որեւորում մատնանը՝ վաճ գործողություններ կատարելու համար՝ նոտարիատը:

Հոդ. 10. Վերոհիշյալ բոլոր հիմնարկությունների և պաշտոնական անձանց ձեռնհասության սահմանները, գործողություններն ու պատասխանատվությունը վորոշվում են սույն Կանոնադրքի համապատասխան հատվածներով ու հոդվածներով:

Գ Լ Ո Ի Խ II

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդ. 11 Ժողովրդական դատավոր կարող է լինել դատական վճռով չարատավորված յուրաքանչյուր քաղաքացի, այլ թե կին, վոր համապատասխանում է հետևյալ պայմաններին.

ա) վոր խորհուրդների անդամ ընտրելու և ընտրվելու իրավունք է վայելում:

բ) վոր ունի յերկու տարուց վոչ պակաս ստաժ՝ բանվորագյուղագիական կամ կուսակցական բանվորական կազմակերպությունների մեջ տարած պատասխանատու քաղաքական աշխատանքի, կամ յերեք տարուց վոչ պակաս ստաժ՝ խորհրդային արդարագատության մարմիններում, Ժողովրդական քննիչից վոչ ցած պաշտոնում տարած գործնական աշխատանքի:

Մանրութուն. — Հասարակական կազմակերպություններից վարկարկող արարքների համար հեռացված անձինք Ժողովրդական Դատավոր չեն կարող լինել:

Հոդ. 12 Ժողովրդական դատավորներին ընտրում են քաղաքագործկոմիները կամ գագործկոմները, և ապա Գլխավոր Դատարանը՝ յուր յեզրակացություն հետ միասին, նրանց ներկայացնում և Արդարագատության Ժողովրդական կոմիտեիատին՝ ի հաստատություն:

Այն դեպքում, յերբ գործկոմը Ժողովրդական դատավորներին ժամանակին չի ընտրում կամ նրանց ընտրածներին Արդարագատության Ժողովրդական կոմիտեիատը չի հաստատում և գործկոմները չեն ունենում որեւոր պահանջները բավարարող այլ անձինք՝ Արդարագատության Ժողովրդական կոմիտեիատը կարող է Ժողովրդական դատավոր նշանակել իր ընտրությունամբ:

Հոդ. 13. Ժողովրդական դատավորներն ընտրվում և նշանակվում են մի տարով և կարող են վերընտրվել: Ժողովրդական դատավորը կարող է հետ կանչվել մինչև վայր ժամանակի լրանալը գործադիր կոմիտեի վորոշմամբ՝ Արդարագատության առաջարկության հիման վրա կամ առաջարկության գործադիր կոմիտեի սեպհական նախաձեռնությամբ: Վերջին դեպքում գործադիր կոմիտեն հայտնում է Արդարագատության Ժողովրդական կոմիտեիատին հետ կանչելու մանրամասն շարժառիթները: Ժողովրդական դատավորին պաշտոնից ժամանակավորապես հեռացնելը կամ պաշտոնանկ անելը տեղի է ունենում բացառապես դատական կարգով կամ սույն Կանոնադրքի 101-116 հոդ. կարգով:

Հոդ. 14. Փավառի Ժողովրդական Դատարանների թիվը և նրանց շրջանների սահմանները վորոշում է Արդարագատության Ժողովրդական կոմիտեիատը՝ տեղական գործադիր կոմիտեի: հետ համաձայնություն գալով:

Գ Լ Ո Ի Խ III

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՏԱԿԱՆ ԴԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հոդ. 15. Ժողովրդական առեհակալ կարող են լինել Հ. Ս. Խ. Հ. յերկու սեռի բոլոր աշխատավոր քաղաքացիները, վոր ունին տեղական խորհուրդների անդամ ընտրելու և ընտրվելու իրավունք:

Հոդ. 16. Ժողովրդական առեհակալ չեն կարող լինել դատական վճռով վարկարկված կամ արհեստակցական կազմակերպություններից՝ վերջիններիս վորոշմամբ, անվանարկող արարքների ու վարքի համար հեռացված անձինք:

Հոդ. 17. Ամեն մի Ժողովրդական առեհակալ կարող է մասնակցել դատական նիստերի վոչ ավելի քան տարեկան վեց որ:

Մանրութուն. — Սույն հոդվածի բացառությունները հիշված են Գրեական Դատավարության Որենսդրությամբ:

Հոգ. 18. Ժողովրդական ատենակալների տարեկան ցուցակները կազմվում են հետեվյալ հաշվով. ընդհանուր ցուցակներ՝ յուրաքանչյուր ժողովրդական Դատարանի շրջանի համար 200 հոգու և հատուկ ցուցակներ՝ Գլխավոր Դատարանի համար, Յերեվանում 200 հոգու, Լենինականում 100 հոգու և ամեն մի գավառում 50 հոգու:

Փանորություն.—Հատուկ ցուցակների մեջ մտնում են հասարակական կամ արհեստակցական կազմակերպությունների մեջ յերկու տարուց վոչ պակաս աշխատելու ստաժ ունեցող քաղաքացիները:

Հոգ. 19. Ժողովրդական ատենակալների ցուցակները կազմվում են տարեկան մեկ անգամ՝ առ 1-ն դեկտեմբերի: Ժամանակը լրանալուց յերկու ամիս առաջ ամեն մի գավառական գործադիր կոմիտեյի հատուկ հանձնաժողով ժողովրդական Դատարանների և Գլխավոր Դատարանի համար սահմանված թվով ատենակալների բաշխումն և կատարում՝ գործադիր կոմիտեյի սահմաններում գործող պետական ու հասարակական հիմնարկությունների ու ձեռնարկությունների, արդյունաբերական ձեռնարկությունների, գավառականների ու զինվորական մասերի միջև:

Հոգ. 20. Բաշխման հանձնաժողովը կազմվում է տեղական գործադիր կոմիտեյի նախագահի նախագահությամբ, տեղական արհմիությունների ներկայացուցչի և գավառի ժողովրդական դատավորներից մեկի անգամակցությամբ և դատախազի մասնակցությամբ: Բաշխումը կատարվում է մոտավորապես հետեվյալ հաշվով.

ատենակալների 50%՝ բանվորներից ու խորհրդային պաշտոնյաներից, 35%՝ գյուղերից և 15%՝ զինվորական մասերից: Կազմված բաշխման հաշվեցուցակները ուղարկվում են ըստ պատկանելույն համապատասխան պետական ու հասարակական հիմնարկություններին ու ձեռնարկություններին, գործարանային կոմիտեներին, գործադիր կոմիտեներին ու զինվորական մասերի կոմիտեներին:

Հոգ. 21. Բաշխման հաշվեցուցակը ստանալով՝ գործարանային կոմիտեները և վերը հիշված մյուս հիմնարկությունները թեկնածուներ են ընտրում՝ նրանց քաղաքական պատրաստականությունը, աստիճանը նկատի առնելով, ապա ի տեղեկություն հանրության կախ են տալիս թեկնածուների ցուցակները գործարաններում, հիմնարկություններում, գործադիր կոմիտեներում, բանվորական ակումբներում և այլն: Մի շարքովա ընթացքում ամեն մի աշխատավոր կարող է բողոք ներկայացնել ցուցակը կազ-

մող հիմնարկությունները այս կամ այն թեկնածուի դեմ՝ մատնանշելով այդպիսի մերժման շարժառիթները: Ժամանակը լրանալուց հետո՝ համապատասխան հիմնարկությունները ցուցակներն ուղարկում են հանձնաժողովին, կցելով մերժման հայտարարություններն ու նրանց առթիվ իրենց յեզրակացություններն ըստ եռթյան:

Հոգ. 22. Գավառի բոլոր հիշյալ հիմնարկություններից ցուցակներն ստանալուց հետո՝ գավառական հանձնաժողովը (20 հոգ) կազմվում է ընդհանուր և հատուկ ցուցակները, վորոնցից կարող է դուրս հանել այն անձանց, վոր այս կամ այն պատճառով չեն համապատասխանում ժողովրդական ատենակալ լինելու պայմաններին և ցուցակները հաստատելուց հետո՝ ուղարկում է ըստ պատշաճի ժողովրդական դատավորներին ու Գլխավոր Դատարանին:

Հոգ. 23. Գավառական հանձնաժողովի վարչմամբ ժողովրդական ատենակալների ցուցակից դուրս հանված անձինք իրավունք ունեն ցուցակները հաստատելու որից յերկու շաբաթվա ընթացքում՝ այդ վերջուման դեմ դանգատ ներկայացնելու Գլխավոր Դատարանին, վորի վորոշումներն այդ խնդրի մասին վերջնական են:

Գլխավոր դատարանը քննում է այդ դանգատները Արհեստակցական Միության, Գործադիր կոմիտեյի, Ռազմական կոմիտարիատի ներկայացուցիչների ու դատախազի մասնակցությամբ:

Հոգ. 24. — Ժողովրդական ատենակալների հաստատված ցուցակներն ստանալուց հետո Գլխավոր և ժողովրդական Դատարանները հրավիրում են ժողովրդական ատենակալներին դատավորի պարտականություններ կատարելու հերթով, ցուցակի կարգով, յերկուսին դատարանի կազմի մեջ և մեկին՝ վորպես փոխ-ատենակալ:

Հոգ. 25. — Դատական նիստը բանալուց հետո՝ նախագահողը, բացատրում է ժողովրդական ատենակալներին իրենց իրավունքներն ու պարտականությունները և հանդիսավոր խոստումն է տանում նրանցից, զրավոր, վոր խղճի մտքը պիտի գտնեն:

Հոգ. 26. — Ատենակալները պահպանում են իրենց գործատեղի աշխատավարձը՝ ատենակալության ամբողջ ժամանակամիջոցում, հաշվելով նաև դատարանի գտնված վայրը գնալու ու վերադառնալու ժամանակը: Այն անձինք, վորոնք իրենց գոյություն միջոցներն ստանում են գյուղական աշխատանքից կամ տնային արհեստից, որապահիկ են ստանում Արդարադատության Ժողովրդական կոմիտարիատի միջոցներից դատարանի որդերներով՝ տվյալ վայրի նրավագրույն աշխատավարձի համեմատ:

Հոդ. 27.— Ժողովրդական ատենակալներին հիվանդության, կամ այլ հարգելի պատճառներով հերթին չներկայանալու դեպքում, հերթը մեքենաբար փոխադրվում է ցուցակի վերջը և այդ մասին ժողովրդական դատավորը տեղեկացնում է ատենակալին:

Գ Լ Ո Ի Խ IV.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴՎԱՆԱՏԱՆ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԴԱՏԱՎՈՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդ. 28.— Ժողովրդական Դատարանի ղեկավարատան պաշտոնեություն կազմը վորոշում է Արդարադատության ժողովրդական կոմիտեարիատը: Ժողովրդական Դատարանների պահպանության ծախքը հոգացվում է համապետական միջոցներից, վոր բաց են թողնվում Արդարադատության ժողովրդական կոմիտեարիատի համապատասխան նախահաշիվներով:

Հոդ. 29.— Յուրաքանչյուր ժողովրդական Դատարան ունի իր քարտուղարը, վորին պաշտոնի մեջ հաստատում է Գլխավոր Դատարանը՝ ժողովրդական դատավորի առաջարկությամբ: Դատական վճռով արատավորված կամ պախարակելի արարքների ու վարքի համար հատարական կազմակերպություններից վտարված անձինք չեն կարող ժողովրդական դատարանի քարտուղարի պաշտոն ունենալ: Դիվանատան մնացյալ աշխատակիցներին նշանակում է ժողովրդական դատավորը:

Հոդ. 30.— Անմիջական հսկողությունը ժողովրդական դատավորի գործունեության, ինչպես նաև գործի տեխնիկական կազմակերպության վրա, պատկանում է Գլխավոր Դատարանին, վորին ժողովրդական դատավորը յենթարկվում է նաև կարգապահության կարգով: Ժողովրդական դատավորի նյութական, դրամական և այլ ամեն հաշվետվության ձևերը, ժամանակն ու կարգը վորոշվում է Արդարադատության ժողովրդական կոմիտեարիատի հրահանգներով և Գլխավոր Դատարանի ցուցմունքներով ու կարգադրություններով:

Գ Լ Ո Ի Խ V

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՆՆԻՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդ. 31.— Ժողովրդական քննիչներ լինում են. ա) համա-

պատասխան քննչական շրջաններում և բ) Արդարադատության ժողովրդական կոմիտեարիատի դատախազության բաժնում՝ կարևորագույն գործերի շուտափույթ քննության համար:

Հոդ. 32.— Քննչական շրջանների քննիչները կոչվում են «Ժողովրդական քննիչ», իսկ Արդարադատության ժողովրդական կոմիտեարիատի դատախազության բաժնի քննիչները՝ «կարևորագույն գործերի քննիչ»:

Հոդ. 33.— Քննիչ չեն կարող լինել.

ա) դատական վճռով արատավորվածները կամ հասարակական կազմակերպություններից պախարակելի արարքների կամ վարքի համար վտարվածները.

բ) այն անձինք, վոր գեթ յերկու տարի չեն աշխատել խորհրդային արդարադատության հիմնարկություններում՝ ժողովրդական դատարանի քարտուղարի պաշտոնից վոչ ցած պաշտոնում կամ համապատասխան քննություն չեն տվել Գլխավոր Դատարանում.

գ) տեղական խորհուրդների ընտրության իրավունք չունեցողները.

դ) այն անձինք, վոր նկատված են քաղաքացիական պատերազմի ժամանակ, վորպես խորհրդային իշխանությունն անբարյացակամ վերաբերվողներ կամ հակախորհրդային կուսակցությունների մասնակցողներ:

Հոդ. 34.— Քննչական շրջանները բաշխում, քննիչներին նշանակում ու պաշտոնից հեռացնում է Արդարադատության ժողովրդական կոմիտեարիատը:

Հոդ. 35.— Ժողովրդական քննիչները գործում են իրենց համար վորոշված շրջանում, իսկ կարևորագույն գործերի քննիչները՝ ամբողջ Հանրապետության սահմաններում:

Հոդ. 36.— Քննիչների և նրանց ղեկավարների պահպանության ծախքերը հոգացվում են համապետական միջոցներից՝ Արդարադատության ժողովրդական կոմիտեարիատի նախահաշիվով:

Հոդ. 37.— Քննիչները դատարանների, դատախազության, հետաքննության մարմինների և այլ իշխանությունաց հետ իրենց ունեցած փոխ-հարաբերությունների վերաբերմամբ ղեկավարվում են Քրեական Դատախազության Որենսգրքի համապատասխան հոդվածներով և Արդարադատության ժողովրդական կոմիտեարիատի ու Գլխավոր Դատարանի հրահանգներով ու ցուցմունքներով:

ՊԱՅՏՊԱՆՆԵՐԻ ԿՈԼԼԵԳԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Հոդ. 38. Գլխավոր Դատարանին առընթեր կա քրեական և քաղաքացիական գործերի պաշտպանների կոլլեգիա: Պաշտպանների կոլլեգիայի գործունեությունը կարգավորվում է հատուկ կանոնադրությամբ, վոր հաստատում է Արդարադատության Ժողովրդական Կոմիտեիատը:

Հոդ. 39. Պաշտպանների կոլլեգիայի առաջին կազմի անդամները՝ Գլխավոր Դատարանի առաջարկությամբ և Արդարադատության Ժողովրդական Կոմիտեիատի միջնորդությամբ, հաստատվում են Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից: Հետագայում անդամների ընդունելությունն անում է պաշտպանների կոլլեգիայի բյուրոն, վորի առաջարկությունները՝ Գլխավոր Դատարանի միջնորդությամբ, հաստատում է Արդարադատության Ժողովրդական Կոմիտեիատը:

Ծանոթություն. — Պաշտպանների կոլլեգիայի անդամները չեն կարող պաշտոնավարել պետական հիմնարկություններում և ձեռնարկություններում:

Բացառությունները թույլատրվում են՝

1. ընտրությամբ պետական պաշտոն վարողների համար.
2. իրավաբանական գիտությունների պրոֆեսորների և դասատուների համար.
3. պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների իրավագետ խորհրդականների համար՝ ամեն մի առանձին դեպքում Արդարադատության Ժողովրդական Կոմիտեիատի հատուկ թույլտվությամբ:

Հոդ. 40. Պաշտպանների կոլլեգիայի անդամների ընդհանուր ժողովն ընտրում է իր միջից կոլլեգիայի բյուրո:

Հոդ. 41. Պաշտպանների կոլլեգիայի բյուրոյի պարտականություններն են.

ա) Պաշտպանների կոլլեգիայի անդամների կազմի մեջ մտնել ցանկացող անձանց խնդիրների քննությունը և ընդունելությունը, կոլլեգիայի կազմից հեռանալ կամ նախորոք մշտական գործունեություն ընտրած տեղը փոխել ցանկացող անդամների խնդիրների քննությունը.

բ) Կոլլեգիայի անդամների գործողությունների դեմ արվող դանդաղանքների քննությունը և անդամների գործունեության հսկողությունը.

գ) Կոլլեգիայի պարտազանց անդամներին կարգապահական պատասխանատվության յենթարկելը կամ նրանց դեմ քրեական հետապնդումն հարուցանելը.

դ) Ջրի կամ սակագնով պաշտպանության համար՝ պաշտպաններ նշանակելը.

ե) Կոլլեգիայի բյուրոյի տեղական բաժանմունքներ բանալը.

զ) Պաշտպանի և փոխանորդայի միջև վարձատրության մասին վեճ ծագելու պարագային՝ պաշտպանին հասանելիք վարձատրությունը վորոշելը.

ը) Բնակչության ոգնության համար խորհրդատվություն կադմակերպելը.

թ) Կոլլեգիայի ֆոնդը մուծվող դրամական գումարների սրահորհնությունը:

Հոդ. 42. Պաշտպանների աշխատանքի վարձատրությունը լինում է հետևյալ հիմունքներով.

ա. Ժողովրդական Դատարանի հատուկ վորոշմամբ չունեվոր ճանաչված անձինք ազատվում են թե՛ քրեական և թե՛ քաղաքացիական գործերի պաշտպաններին վարձատրելուց.

բ) Պետական ու մասնավոր ձեռնարկությունների բանվորներն ու խորհրդային հիմնարկությունների և ձեռնարկությունների պաշտոնյաներն իրավունք ունին պաշտպաններին Արդարադատության Ժողովրդական Կոմիտեիատի սահմանած սակագնով վարձատրել.

գ) Մնացած բոլոր դեպքերում վարձատրությունը վորոշվում է պաշտպանի և շահագրգռված կողմի համաձայնությամբ:

Հոդ. 53. Ստացվող վարձատրությունից պաշտպանները Արդարադատության Ժողովրդական Կոմիտեիատի սահմանած չափով տեղումներ են մուծում պաշտպանների կոլլեգիայի ֆոնդը, վորից հոգացվում են կոլլեգիայի բյուրոյի և իրավաբանական խորհրդատվության բոլոր ծախքերը:

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդ. 44. Դատական կատարածուները՝ շտառներով վորոշված թվով, գտնվում են Գլխավոր Դատարանին առընթեր և կատարում են այն գործողությունները, վոր հանձնվում են նրանց քաղաքացիա-

կան Դատավորութեան Որենսգրքով՝ դատական վճիռներն ու վորոշումները կատարելու համար, և Քրեական Դատավարութեան Որենսգրքի 121 ա և 459 հոդով անհրաժեշտութեամբ:

Փաճորութիւն.—Դատական վճիռների, այլ և Հողային Հանձնաժողովների վճիռների կատարումը կարող և հանձնվել գաղափարային գործադիր կոմիտեներին և միլիցիական մարմիններին:

Հոդ. 45. Դատական կատարածուները նշանակվում և հեռացվում են պաշտոնից Դիւանավոր Դատարանի նախագահի կարգադրութեամբ:

Հոդ. Դատական կատարածու չեն կարող լինել՝

ա) Դատով արատավորված և վարկաբեկող արարքների ու վարքի համար հասարակական կազմակերպութիւններից վտարված անձիք:

բ) Սորհրդային արդարադատութեան մարմիններում մի տարի վորոշվե պաշտոն չվարած կամ գլխավոր դատարանում համապատասխան քննութիւն չտված անձինք:

գ) Տեղական խորհուրդների ընտրութեան իրավունք չունեցողները:

դ) Այն անձինք, վոր բաղադրական պատերազմի ընթացքում նկատվել են վորպես անբարյաղակամ վերաբերվող դեպի խորհրդային իշխանութիւնը կամ հակախորհրդային կուսակցութիւններին մասնակցող:

Հոդ. 47. Դատական կատարածուները բաշխվում են Ժողովրդական Դատարանների շրջանների համեմատ և գործում են իրենց շրջանների սահմաններում:

Փաճորութիւն.—Վորոշում կայացնող Դիւանավոր և Ժողովրդական Դատարանի կարգադրութեամբ՝ առանձին դեպքերում դատական կատարածուին կարող են հանձնարարվել այս կամ այն վորոշման կատարումը և յուր շրջանների սահմաններից դուրս:

Հոդ. 48. Իրենց պարտականութիւնները կատարելու ժամանակ՝ կարիք չեղած դեպքում, դատական կատարածուները դիմում են միլիցիայի աջակցութեան, վորի համար նման դիմումները պարտադիր են:

Հոդ. 49. Հանձնարարված պարտականութիւնները ձգձգելու դեպքում և այլ ապօրինի գործողութիւնների համար դատական կատարածուները՝ իրենց զանցառութեան կամ չարարկութեան կարեւորութեան համեմատ, յենթարկվում են կարգապահական կամ քրե-

րեական պատասխանատվութեան:

Հոդ. 50. Դատական կատարածուների դանդաղութեան և ապօրինի գործողութիւնների դեմ տրված գանգատները ուղարկվում են դատավճռի կատարման վայրի դատարանին, իսկ դատախազութեան բողոքները ներկայացվում են գլխավոր դատարանի նախագահին:

Գ Լ Ո Ւ Մ VIII

ՊԵՏԱԿԱՆ ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ

Հոդ. 51. Հ. Ս. Ս. Հ. Պետական նոտարիատի կանոնադրութեամբ նախատեսված գործողութիւնները կատարելու համար՝ Հ. Ս. Ս. Հ. քաղաքներում հիմնվում են պետական նոտարի գրասենյակներ, վորոնց թիվը վորոշում է Արդարադատութեան Ժողովրդական կոմիտարիատը՝ հարկավոր տեղեկութիւններ առնելով տեղական գործադիր կոմիտեից:

Փաճորութիւն.—1. Արդարադատութեան Ժողովրդական կոմիտարիատին վերապահվում է նոտարի գրասենյակներ հիմնել նայեմ խոր գյուղերում, ուղեկիցքի կայարաններում, ժամանակավորապես՝ տոնավաճառներում և այլն:

Փաճորութիւն.—2, Այն վայրերում, ուր նոտարի գրասենյակներ չկան, նրանց պարտականութիւնները, բացի աշխատելուց և պայմանագրեր հաստատելուց՝ հանձնարարվում են Ժողովրդական դատավորներին, վորոնք սահմանված սակագնով տուրք են գանձում նոտարական գործողութիւնների համար: Իսկ այն վայրերում, ուր նոտարի գրասենյակներ հիմնված են, բայց նոտարի պաշտոնը թափուր է՝ նոտարի պարտականութիւնները, մինչեւ նոտարի նշանակելը, հանձնարարվում են ամբողջովին Ժողովրդական դատավորին:

Հոդ. 52. Նոտարի գրասենյակները վարում են Արդարադատութեան Ժողովրդական կոմիտարիատի նշանակած նոտարները այն անձերից, վորոնց ցուցակները ներկայացվում են տեղերից և կազմվում՝ բանվորական և գյուղացիական պատգամավորների խորհրդի անդամ ընտրելու իրավունք վայելող և գլխավոր դատարանի նշանակած հանձնաժողովում Արդարադատութեան Ժողովրդական կոմիտարիատի մշակած ծրագրով պատշաճ քննութիւն տված անձերից:

Փաճորութիւն.—Նոտարները չեն կարող վարձու պաշտոն ունենալ խորհրդային, հասարակական և մասնավոր հիմնարկութիւն-

ների ու ձեռնարկությունների մեջ և մասնակցել առեկտրա-արդյունաբերական ձեռնարկություններին, այլ և պիտի համապատասխանեն սույն Կանոնագր. 47 հոդ. պահանջներին: Պաշտոնական հանցագործության համար նոտարները պատասխանատու չեն, վորպես պետական պաշտոնյաներ:

Հոդ. 53. Նոտարի գրասենյակների գործունեության վերահստությունն ու վերահսկողությունը հանձնարարվում է Գլխավոր Դատարանի նախագահին: Նոտարի գրասենյակների գործունեության մերձավոր ղեկավարությունն ու ուղղությունը տալիս է Գլխավոր Դատարանի քաղաքացիական բաժնի նոտարական բաժանմունքը, վոր անմիջականորեն յենթարկվում է Գլխավոր Դատարանի՝ քաղաքացիական բաժնին վարող փոխ-նախագահին:

Հոդ. 54. Նոտարական բաժանմունքը պարբերաբար վերստուգում է նոտարի գրասենյակների գործունեությունը, ընդունում և ստուգում է սահմանված տեղեկագրերն ու ամփոփումները: Նոտարի գրասենյակների գործունեության ընդհանուր ղեկավարությունն ու հսկողությունը հանձնարարվում է Արդարադատության ժողովրդական Կոմիսարիատին:

Հոդ. 55. Նոտարական բաժանմունքն ունի նոտարական դիվան:

Հոդ. 56. Նոտարի վորյեվե գործողության կամ գործողություն կատարելու մերժման դեմ տրված գանգատները քննում է Գլխավոր Դատարանի քաղաքացիական բաժինը:

Հոդ. 57. Նոտարի գրասենյակներն ու բաժանմունքը պահվում են այն գանձումների հաշվին, վոր Արդարադատության ժողովրդական Կոմիսարիատի սահմանած չափերով՝ մուծվում են նոտարական գործողությունների համար:

Հ Ա Տ Վ Ա Ծ II.

Գ Լ Ո Ի Խ IX.

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Գլխավոր Դատարանը գործում է.

ա) վորպես իրեն ստորագրյալ ժողովրդական Դատարանների գործունեության անմիջական հսկողության մարմին.

բ) Վորպես վճռաբեկ ատյան, վոր քննում է ստորագրյալ ժողովրդական Դատարանների իրեն տրվող վճռաբեկ գանգատներն

ու բողոքները և նույն գատարանների վորոշումների դեմ՝ տրվող մասնավոր գանգատները:

գ) Վորպես առաջին աստիճանի ատյան՝ որենքով Գլխավոր Դատարանի իրավասությանը վերադառնալով գործերի համար:

Հոդ. 59. — Գլխավոր Դատարանը բաղկացած է Գլխավոր Դատարանի նախագահից, յերկու փոխ-նախագահից, վորոնցից մեկը վարում է քաղաքացիական, իսկ մյուսը՝ քրեական բաժինը, դատարանի մշտական վեց անդամից, Գլխավոր Դատարանի նիստերին մասնակցելու համար հատուկ ցուցակով հրավիրվող ժողովրդական ստենականներից և Գլխավոր Դատարանի ու նրան առնթեր գործող, շտատներով սահմանված՝ հիմնարկությունների գործունեության համար անհրաժեշտ քարտուղարներից ու այլ պաշտոնյաներից:

Հոդ. 60. — Գլխավոր Դատարանի նախագահը և փոխնախագահները, բացի այն պահանջներից, վոր պիտի բավարարեն ժողովրդական դատավորները (սույն Կանոնագրի 11 հոդ.), պետք է ունենան ժողովրդական դատավորի կամ Հեղափոխական Տրիբունալի անդամի պաշտոնում վոչ պակաս քան յերեք տարվա գործնական դատական աշխատանքի ստաժ: Գլխավոր Դատարանի անդամ կարող են լինել միայն այն անձինք, վոր վոչ պակաս քան յերկու տարի վարել են նույն պաշտոնները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Սույն կանոնից շեղումներ կարող են տեղի ունենալ միմիայն Արդարադատության ժողովրդական Կոմիսարիատի թույլտվությամբ:

Հոդ. 61. — Գլխավոր Դատարանի նախագահին, փոխ-նախագահներին և անդամներին նշանակում է մի տարի ժամանակով Արդարադատության ժողովրդական Կոմիսարիատը և հաստատում է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը: Ժամանակը լրանալուց հետո՝ նույն անձինք կարող են վերընտրվել: Հիշյալ անձանց պաշտոնից հետ է կանչում Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը կամ անմիջականորեն կամ Արդարադատության ժողովրդական Կոմիսարիատի առաջարկությամբ, իսկ պաշտոնից հեռացնելը կարող է տեղի ունենալ միմիայն դատական կամ կարգապահական գործավորության կարգով:

Հոդ. 62. — Գլխավոր Դատարանի բաժինների քարտուղար կարող են լինել միայն այն անձինք, վոր համապատասխանում են

ժողովրդական քննչից վոչ ցած պաշտոնի պահանջներին: Քարտուղարին նշանակում է Գլխավոր Դատարանի նախագահը և հաստատում է Արդարադատության ժողովրդական կոմիտեի ատար: Քարտուղարներին մեկը կոչվում է Գլխավոր Դատարանի աշխատակալ: Գլխավոր Դատարանի գլխավորատան ալ պաշտոնյաներին նշանակում է Գլխավոր Դատարանի նախագահը:

Հոդ. 63. — Գլխավոր Դատարանի ալ հիմնարկություններն ու պաշտոնյաները գործում են հատուկ հաստատված կանոնների հիման վրա:

Գ Լ ՈՒ Խ Վ

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱՐԱՆԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Հոդ. 64. — Նախագահը և փոխ-նախագահները պատասխանատու են Գլխավոր Դատարանի ամբողջ աշխատանքի կանոնավորության ու նպատակահարմարության և գործող որենքների ու կարգադրությունների ճիշտ ու անշեղ գործադրության համար՝ թե Գլխավոր Դատարանում և թե ստորադրյալ բոլոր հիմնարկություններում:

Հոդ. 65. — Ըստ այսմ գատարանի նախագահի իրավասության վերաբերում են.

ա) Գլխավոր Դատարանի անդամների պարտականությունների վորոշումն ու բաշխումը, ժողովրդական ատենակալների ցուցակները ժամանակին և որենքի պահանջներին համեմատ կազմելու և ստորադրյալ հիմնարկություններից տեղեկագրներ պահանջելու հրահրությունը, Գլխավոր և ժողովրդական Դատարանների հաշվետվություն կազմելն ու Արդարադատության ժողովրդական կոմիտեի ատարին ներկայացնելը, հսկողություն դիվանատան գործունեության և Գլխավոր Դատարանի գրամական, նյութական և ալ հաշվետվության վրա և գրադրությունը՝ Արդարադատության ժողովրդական կոմիտեի ատարի և ալ գերատեսչությանց հետ գատարանի գործերի ատթիվ, նոտարիատի և պաշտպանների կոլեգիայի գործունեության հսկողությունը:

բ) Գլխավոր Դատարանի ընդհանուր նիստեր գումարելը, ալ ժողովներին նախագահելը, նախնական ծանոթություն գլխավոր գատարանի ընդհանուր նիստերի քննությանը գրվող բոլոր նյութ-

թերի, իր նախաձեռնությունը նյութեր առաջարկելը ընդհանուր նիստերի քննության, դատարանի իրավասության յենթակա բոլոր հարցերի վերաբերմամբ, վորոնց թվում ժողովրդական քննիչների, ժողովրդական դատավորների, պաշտպանների կոլեգիայի անդամների և ալ պաշտոնյաների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ նյութեր պատրաստելը, ժողովրդական դատավորներին, քննիչներին և ալ պաշտոնյաներին կարգապահական պատիժների յենթարկելը՝ նախագահին վերապահված իշխանության սահմաններում:

Հոդ. 66. Գլխավոր Դատարանի ընդհանուր նիստը կազմվում է Գլխավոր Դատարանի բոլոր յեղած անդամներից, բայց համենայն դեպս կիսից վոչ պակաս թվով, դատախազի պարտադիր մասնակցությամբ և զբաղվում է.

ա) ժողովրդական դատավորների տեղեկագրների քննությամբ, վորոնց մասին զեկուցանում են Գլխավոր Դատարանի նախագահի կողմից նշանակված առանձին անդամները, ժողովրդական Դատարանների, քննիչների վերստուգումներ նշանակելով, նրանց մասին զեկուցումները լսելով, Գլխավոր Դատարանի իրավասության սահմաններում հրամանների ու հրահանգների մշակությամբ:

բ) ժողովրդական գատավորներին, ժողովրդական քննիչներին, Գլխավոր Դատարանի ստորադրյալ ալ պաշտոնյաներին, վորոնց թվում և Գլխավոր Դատարանի անդամներին կարգապահական պատասխանատվության յենթարկելու համար հարուցված բոլոր հարցերի քննությամբ, մինչև վ պատասխանատվության յենթարկված անձանց գործի քննությունը՝ ժողգատավորներին ու ժողքնիչներին պաշտոնից հեռացնելու վորոշումներ անելով և Գլխավոր Դատարանի կարգապահական կոլեգիայի ընտրությամբ:

գ) Առանձին հարցերի քննությամբ, վոր առաջարկում է Գլխավոր Դատարանի նախագահը կամ Գլխավոր Դատարանի գատական կամ վճռաբեկ նիստի առանձին կազմը և կամ գատախազը և վոր վերաբերում են գործող որենքների մթությունը կամ թերությունը, սակայն ամեն անգամ բացառապես վորեից կոնկրետ գործի կամ վորոշման ատթիվ և ալ հարցերի վերաբերյալ իր նկատառումները Գերագույն Դատարանին ներկայացնելով:

Հոդ. 67. Յեթե նիստի նախագահողը համաձայն լինի ընդհանուր նիստի վճռին, բացի նախորդ հոդվածի գ կետում նախա-

66947

տեսված դեպքերից, ընդհանուր նիստի վճիռը անհապաղ ի կատար ե ածվում, իսկ համաձայն չլինելու դեպքում՝ ամբողջ նյութը պիտի տրվի ի լուծումն Արդարադատության ժողովրդական կոմիտեարխատին կամ Գերագույն Դատարանին ըստ պատշաճի: Յեթե դատախազը բողոքելու լինի Գլխավոր Դատարանի ընդհանուր նիստի վճռի դեմ, այդ բողոքը չի կասեցնում Գլխավոր Դատարանի վճռի գործադրությունը:

Հոդ. 68. Գլխավոր Դատարանի բաժինները կազմվում են յե-րեք անդամից, վորոցն թվումն է նախագահը կամ փոխ-նախագահը և յերկու անդամ: Վճռաբեկության գործերով զբաղվող դատա-կան նիստերը տեղի են ունենում յերեք մշտական անդամի կազմով, դատախազի մասնակցությամբ, իսկ I աստիճանի ատյանի գործերով զբաղվող դատական նիստերը կազմվում են Գլխավոր Դատարանի մի մշտական անդամից և յերկու ժողովրդական ատենակալներից: Նիս-տերին նախագահում են նախագահը կամ փոխ-նախագահները, իսկ նրանց նիստին չմասնակցելու դեպքում՝ նախագահի կողմից նշանակված Գլխավոր Դատարանի մշտական անդամը:

Հոդ. 69. Գլխավոր Դատարանի տնօրինական նիստերը կազ-մվում են յերեք մշտական անդամից, իսկ նրանց բացակայության դեպքում՝ տնօրինական նիստերի կազմը կարող են լրացնել ժող-դատավորներն ու ժողատենակալները:

Հոդ. 70. Կարգադահական գործերի քննության համար գու-մարվող Գլխավոր Դատարանի կազմը լինում է յերեք հոգուց, վորոնց թվումն է նախագահը կամ փոխ-նախագահը և յերկու անդամ Գլխավոր Դատարանի ընդհանուր նիստի ընտրությամբ:

ԳԼՈՒԽ XI.

ԳԼՈՒԽԱՎՈՐ ԴԱՏԱՐԱՆԻ ԼԵԱԶՈՐՆԵՐԸ

Հոդ. 71. Գլխավոր Դատարանի առանձին շրջաններում կան Գլխավոր Դատարանի լիազորներ, վերջինս անդամների իրավունք-ներով: Նրանց Գլխավոր Դատարանի ընդհանուր նիստն է ընտրում իր անդամներից կամ նշանակում է տեղական ժողովրդական դա-տավորներից:

Հոդ. 72. Գլխավոր Դատարանի շրջանի լիազորի պարտակա-նություններն են.

ա) Հսկողություն շրջանում գործող նոտարների, պաշտպան-ների և դատական կատարածությունների վրա.

բ) Գլխավոր Դատարանի ընդհանուր նիստի վորոշմամբ՝ ա-ռանձին քրեական ու քաղաքացիական գործերի քննությունը և Գլխավոր Դատարանի քաղաքացիական բաժնի հանձնարարությամբ առանձին ստուգողական գործողություններ կատարելը.

գ) Աշխատավորական գործերի քննությունը և մասնակցու-թյուն գավառական հողային հանձնաժողովներին՝ իր մշտապես գտնված վայրում.

դ) Մասնակցություն ժողովրդական ատենակալների ցուցակ-ները կազմող ու բաշխող տեղական հանձնաժողովներին մեջ.

ե) Արդարադատության աշխատավորների շրջանային խորհրդ-դակցությունների գումարումը և նախագահությունը նրանց մեջ, գործող որենքների կիրարկության հետ կապված հարցերը միասին քննելու և Արդժողկոմատի, Գեհագույն Դատարանի և Գլխավոր Դա-տարանի շրջաբերականներին ծանոթացնելու համար:

Հոդ. 73. Գլխավոր դատարանի լիազորն իր պարտականու-թյունները կատարելու համար ոգտվում է տեղական ժողովրդական Դատարանի տեխնիկական ապարատից.

Հ Ա Տ Վ Ա Ծ III.

ԳԼՈՒԽ XII.

ԴԵՏԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Հոդ. 74. Պետական դատախազության պարտականություն-ներն են.

ա) Պետության անունից հսկել իշխանության բոլոր մարմին-ների, տնտեսական հիմնարկությունների, հասարակական և մասնա-վոր կազմակերպությունների ու մասնավոր անձանց գործողություն-ների որինականության վրա, հանցավորների դեմ քրեական հետա-պնդություն հարուցանելով ու որենքները խախտող վորոշումները բողոքարկելով.

բ) Հանցանքները յերեվան հանելու գործում՝ անմիջական հսկողություն քննիչ ու հետաքննիչ մարմինների, այլև պետական քաղաքական վարչության մարմինների գործունեության վրա.

դ) Ամբաստանություն դատարանում.

դ) Հսկողություն կալանավորներին կալանքի տակ կանոնավոր պահելու վրա.

Հոդ. 75. Դատախազության գլուխն է, վորպես Հանրապետության դատախազ՝ Արդարադատության Ժողովրդական Կոմիսարը: Հանրապետության դատախազը անմիջականորեն վարում է Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատի դատախազության բաժինը:

Հոդ. 76. Հանրապետության դատախազն ունի շտառներով սահմանված թվով ոգնականներ, վորոնցից մեկը կատարում է դատախազի պարտականությունները Հ. Ս. Խ. Հ. Գերագույն Դատարանում: Հանրապետության դատախազի ոգնականներին, նրա առաջարկությամբ՝ հաստատում է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը:

Հոդ. 77. Գավառներում կան Հանրապետության դատախազի անմիջական ստորադրյալ գավառական դատախազներ, վորոնց նշանակում է դատախազը թե կենտրոնի աշխատակիցներից և թե տեղական ղեկավար մարմինների առաջարկած թեկնածուներից: Գավառական դատախազներին պաշտոնանկ է անում, տեղափոխում և պաշտոնից հեռացնում է Հանրապետության դատախազը:

Հոդ. 78. Զինվորական Տրիբունալին առնթեր կա զինվորական դատախազ, վոր անմիջապես յենթարկվում է Հանրապետության դատախազի՝ Հ. Ս. Խ. Հ. Գերագույն Դատարանում գործող ոգնականին:

Զինվորական դատախազին նշանակում, տեղափոխում և պաշտոնանկ է անում Հանրապետության դատախազը:

Հոդ. 79. Հանրապետության դատախազի պարտականություններն են.

ա) Հսկողություն բոլոր Ժողովրդական կոմիսարիատների և այլ կենտրոնական հիմնարկությունների ու կազմակերպությունների գործունեության օրինականության վրա և նրանց ապուրինի կարգադրությունների ու վորոշումների փոփոխության կամ վերացման մասին առաջարկություններ անելը.

բ) Բողոքարկել վերոհիշյալ կարգադրությունների ու վորոշումների վերացման համար՝ Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությանը և Ժողովրդական Կոմիսարների Խոր-

հրդին. դատախազի բողոքարկումը չի կասեցնում սակայն բողոքարկած կարգադրության կամ վորոշման գործադրությունը.

գ) Ղեկավարել և հսկողություն ունենալ ա) Հանրապետության դատախազի ոգնականների և տեղերում՝ գավառական դատախազների գործունեության վրա և բացատրություններ ու ցուցմունքներ տալ՝ նրանց գործունեության ընթացքում ծագող բոլոր հարցերին.

դ) Անմիջականորեն դատախազի պարտականությունների իրագործումը այն դեպքերում, յերբ Հանրապետության դատախազն այդ անհրաժեշտ կը համարի:

Հոդ. 80 Հանրապետության դատախազը յուրաքանչյուր տարի տեղեկագիր է ներկայացնում Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությանը իր և իրեն ստորադրյալ դատախազների գործունեության մասին:

Հոդ. 81. Տեղերում՝ գավառական դատախազների պարտականություններն են.

ա) Դիմել գործադիր կոմիտեներին՝ այդ կոմիտեների կամ նրանց ստորադրյալ մարմինների հրատարակած ապուրնի կարգադրությունները և վորոշումները վերացնելու կամ փոփոխելու առաջարկությամբ.

բ) Բողոքել վերոհիշյալ կարգադրությունների ու վորոշումների դեմ Հայաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին կամ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությանը՝ հանրապետության դատախազի միջոցով:

Հոդ. 82 Գավառական դատախազն իրավունք ունի խորհրդակցական ձայնով մասնակցելու տեղական գործադիր կոմիտեների բոլոր նիստերին:

Հոդ. 83. Հանցագործությունների դեմ կովելու գործում դատախազության պարտականություններն են.

ա) դատական հետապնդություն հարուցանել պաշտոնյաների և մասնավոր անձանց դեմ, թե իր նախաձեռնությամբ և թե իր լուտացած գանգատների ու զիմումների հիման վրա.

բ) Նախաքննության ու հետաքննության հսկողությունը, նախաքննության ու հետաքննության մարմիններին բացատրություն տալը կանխարգել միջոցների, նույնպես և նախաքննության հետ կապված այլ հարցերի մասին.

գ) Հետաքննության մարմիններից ստացվող գործերի կարճման և դատի մատնելու խնդրի լուծումն. դատախազության առաջարկությունները այդ կատեգորիայի գործերի համար դատի մատնելու մասին անմիջականորեն դատարան են ուղարկվում:

դ) Քննիչների մեղադրական ու կարճման յեզրակացությունների հաստատելը բոլոր նախաքննված գործերի վերաբերմամբ, մեղադրական յեզրակացություն կազմելը՝ այն դեպքերում, յերբ դատախազը համամիտ չե քննիչի յեզրակացությանը, և իր յեզրակացությունը դատարանի տնօրինական նիստին հղելը՝ վերջնական հաստատության համար:

ե) Մասնակցություն դատարանի տնօրինական նիստին՝ դատի մատնելու և գործերը կարճելու խնդիր յեղած պարագային այն բոլոր դեպքերում, յերբ դատախազությունը անհրաժեշտ կը համարի իր մասնակցությունն այդ նիստերին:

զ) Ամբաստանություն դատարանում:

ը) Դատարանի արած վճիռների ու վորոշումների բողոքարկումը բեկման կարգով և բողոքարկումն հսկողության կարգով՝ որինական ույժ ստացած քրեական գործերի վերաբերյալ դատավճիռների և վճռաբեկ վորոշումների, այլև հանրային նշանակություն ունեցող քաղաքացիական գործերի վերաբերյալ վճիռների ու վճռաբեկ վորոշումների:

թ. Կալանքի կանոնավորության ստուգումն առանց բացառության բոլոր կալանավայրերում և անկանոն կերպով կալանավորվածներին ազատելը:

Հոդ. 84. Քաղաքացիական դատավարության մեջ դատախազության պարտականությունները, վոր սահմանված են Քաղաքացիական Դատավարության Որենսգրքի համապատասխան հոդվածներով, հետեվյալներն են.

ա) Մասնակցություն գործերի համար տեղի ունեցող դատական նիստերին:

բ) Հսկողության կարգով՝ այդպիսի գործերը պահանջելը և

գ) այդ գործերի վերաբերյալ դատական վճիռների ու վճռաբեկ վորոշումների բողոքարկումը:

Հոդ. 85. Դատախազության պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ դեպքերում (74 հոդ. համաձայն) գավառական դատախազն իրավունք ունի անհրաժեշտ տեղեկություններն

ու նյութերը պահանջել գավառում գործող իշխանություն բոլոր մարմիններից, հիմնարկություններից, կազմակերպություններից և 74 հոդ. ա կետում հիշված անձանցից, վորոնց համար այդպիսի պահանջների կատարումը պարտադիր ե:

Պատգուրություն.—Այն դեպքերում, յերբ պետական քաղաքական վարչության մարմիններն այս կամ այն գործն առանձնապես զաղտնի բնույթ ունեցող են համարում, նրանք իրավունք ունին պահանջելու, վոր գործի քննությունը կատարե դատախազն ինքն անձամբ: Հոդ. 86 Գավառական դատախազն ամեն ամիս տեղեկագիր ե ներկայացնում Հանրապետության դատախազին իր գործունեության մասին:

Հոդ. 87 Ձինվորական Տրիբունալի դատախազությունն իրագործում ե դատախազական իրավունքները զինվորական գերատեսչության հիմնարկությունների ու պաշտոնյաների վերաբերմամբ այնպիսի տեղերում, ուր չկա ընդհանուր դատախազություն կամ ուր զինվորական հիմնարկություններն ու համապատասխան գերատեսչությունց պաշտոնյաները դուրս են հանված ընդհանուր դատախազության իրավասությունից:

ՀԱՏՎԱԾ IV.

ԳԼՈՒԽ XIII.

Հ. Ս. Խ. Հ. ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հոտ. 88. Հ. Ս. Խ. Հ. Գերագույն Դատարանի (Կանոնագրքի 5 հոդ.) կազմն ե.

ա) Գերագույն Դատարանի նախագահությունը.

բ) Գերագույն Դատարանի ընդհանուր նիստը.

գ) Գերագույն Դատարանի վճռաբեկ կոլլեգիաները՝ քրեական ու քաղաքացիական գործերի համար.

դ) Դատական կոլլեգիաները՝ քրեական ու քաղաքացիական գործերի համար և Գերագույն Դատարանի զինվորական կոլլեգիան,

ե) Գերագույն Դատարանի կարգապահական կոլլեգիան:

Հոդ. 89 Գերագույն Դատարանի նախագահին ու անդամներին հաստատում ե Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահությունը: Գերագույն Դատարանի նախագահին, փոխնախագահին, քրեական ու քաղաքացիական գործերի դատական կոլլեգիաների նախագահներին, զինվորական կոլլեգիայի նախագահներին նշանակում ե Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմի-

տեյի նախագահութիւնը անմիջականորեն, իսկ Գերագույն Դատարանի մնացյալ անդամներին՝ Արդարադատութեան ժողովրդական կոմիտեի ատաղարկութեամբ: Ձինվորական կոլլեգիայի անդամներին ներկայացնում եւ Հանրապետութեան Հեղափոխական Ձինվորական Պորժադիր կոմիտեյի նախագահութիւնը Արդարադատութեան ժողովրդական կոմիտեի ատաղարկութեամբ: Համաձայն:

Հոդ. 90. Գերագույն Դատարանի նախագահին ու անդամներին հետ կանչել և պաշտոնից հեռացնել կարող եւ միայն Հայաստանի կենտրոնական Գործադիր կոմիտեյի նախագահութիւնը:

Ծանոթութիւն. Գերագույն Դատարանի ու նրա բաժինների մնացյալ բոլոր պաշտոնյաները, դատախազներն ու դատական կոլլեգիաների քարտուղարները նշանակվում և հեռացվում են պաշտոնից, համաձայն իրանց վերաբերյալ կանոնների ու որենքների:

ԳԼՈՒԽ XIV.

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԻՍՏԻ ԶԵՌՆԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Հոդ. 91 Գերագույն Դատարանի նախագահը, փոխ-նախագահը, վճռաբեկ կոլլեգիաների նախագահները, քրեական ու քաղաքացիական գործերի դատական կոլլեգիաների նախագահները և զինվորական կոլլեգիայի նախագահը կազմում են Գերագույն Դատարանի նախագահութիւնը, վորի իրավասութեանը վերաբերում եւ:

1. Գերագույն Դատարանի և յուր հիմնարկութիւնների ու պաշտոնյաների վերաբերմամբ՝

ա) Գերագույն Դատարանի անդամների բաշխումն ըստ կոլլեգիաների և Գերագույն Դատարանի յուրաքանչյուր անդամի պարտականութիւնների վորոշումը:

բ) Կոլլեգիաների տեղեկագրերի ստուգումն ու հաստատութիւնը և Գերագույն Դատարանի ընդհանուր տեղեկագիրը կազմելը:

2. Դատական մարմինների հսկողութեան վերաբերմամբ՝

ա) Գլխավոր Դատարանի և ըստ որինի նրանց համաստիճան ալլ դատարանների հատուկ վերստուգումներ նշանակելը՝ Հանրապետութեան դատախազի առաջարկութեամբ և ալլ վերստուգումների արդյունքը լսելը:

բ) Կարգապահական գործ հարուցանելը Գերագույն Դատարանի անդամների, Գլխավոր Դատարանի և նրանց համաստիճան դատարանների նախագահների ու փոխ-նախագահների դեմ, թե կատարած վերստուգումների հետևանքով և թե Հանրապետութեան դատախազի հաղորդած առանձին տեղեկութիւնների հիման վրա, և կարգապահական պատժի յենթարկել հիշյալ անձանց՝ նախագահութեանը վերապահված իշխանութեան սահմաններում:

գ) Գերագույն Դատարանի ընդհանուր նիստերի գումարումը և նրանց համար նյութեր պատրաստելը:

Ծանոթութիւն. Նախագահութեան նիստերին անպայման մասնակցում ե խորհրդակցական ձայնով Հանրապետութեան դատախազի՝ Գերագույն Դատարանին առնթեր գտնվող ոգնականը:

Հոդ. 92. Գերագույն Դատարանի ընդհանուր նիստերը կազմվում են Գերագույն Դատարանի բոլոր յեղած ամսականները, սակայն Գերագույն Դատարանի բոլոր անդամները կիսից վոչ պակաս թվով՝ նախագահի կամ փոխ-նախագահի նախագահութեամբ և Հանրապետութեան դատախազի կամ նրա ոգնականի պարտադիր մասնակցութեամբ, և իրավասու են:

1. Որենքներն ուղիղ մեկնաբանելու՝ դատական գործունեութեան ընթացքում ծագող հարցերի առթիվ, վոր հարուցանում են առանձին կոլլեգիաները կամ այս կամ այն կոլլեգիայի դատական նիստերի առանձին կազմը և կամ առաջարկում՝ Գերագույն Դատարանի նախագահութիւնը, Հանրապետութեան դատախազը կամ Գերագույն Դատարանին առնթեր գտնվող՝ նրա ոգնականը:

2. Քննելու և հաստատելու Գերագույն Դատարանի այն վորոշումները, վոր վերաբերում են Գերագույն Դատարանի դատական ու վճռաբեկ կոլլեգիաների և Հանրապետութեան վորեւ ալլ դատարանի վճիռները ջնջելուն կամ փոխելուն և վոր ուղարկվում են Գերագույն Դատարանին՝ Հայաստանի կենտրոնական Գործադիր կոմիտեյի նախագահութեան վորոշմամբ, Գերագույն Դատարանի նախագահի և Հանրապետութեան դատախազի կողմից և կամ բողոքարկվում՝ կոլլեգիաների նիստերում նախագահողների կամ նիստերի դատախազների կողմից:

3. Հաստատելու Գերագույն Դատարանի նախագահութեան շրջաբերականները և քննելու նախագահութեան կողմից Գերագույն Դատարանի ընդհանուր նիստերը մուծվող ալլ հարցերը:

4. Ընտրելու Գերագույն Դատարանի կարգապահական կոլեգիան:

ԳԼՈՒԽ XV.

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԳՍՏԱՐԱՆԻ ՎՃՌՈՒԹՅԱՆ ՈՒ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԼԵԳԻԱՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Հոդ. 93. Վճռաբեկ կոլլեգիաները գործում են Գերագույն Դատարանի նախագահի անձնական հսկողությամբ ու ղեկավարությամբ: Նրա անմիջական ոգնականներն են վճռաբեկ բաժնում՝ Գերագույն Դատարանի քրեական ու քաղաքացիական գործերի վճռաբեկ կոլլեգիաների նախագահները: Նախագահն իրավունք ունի իր վրա վերցնելու նախագահությունն ամեն մի գործում, վոր քննվում է վճռաբեկ կոլլեգիաներում:

Հոդ. 94. Վճռաբեկ կոլլեգիայի դատական նիստը կազմված է յերեք հոգուց՝ նախագահից և յերկու մշտական անդամից:

Հոդ. 95. Գերագույն Դատարանի փոխ-նախագահը Գերագույն Դատարանի ամբողջ դատական մասի գլուխն է այն գործերի համար, վոր քննվում են Գերագույն Դատարանում, վորպես առաջին աստիճանի դատարանում: Նրա անմիջական ոգնականներն են քրեական ու քաղաքացիական գործերի դատական կոլլեգիաների նախագահները և Գերագույն Դատարանի զինվորական կոլլեգիայի նախագահը:

Հոդ. 96. Քրեական ու քաղաքացիական գործերի դատական կոլլեգիաներից յուրաքանչյուրը կազմվում է կոլլեգիայի նախագահից և մշտական անդամներից: Կոլլեգիայի նիստերը տեղի յեն ունենում կոլլեգիայի նախագահի կամ անդամի նախագահությամբ և յերկու ժողովրդական ատենակալների մասնակցությամբ: Ժողովրդական ատենակալների հատուկ ցուցակը, թվով 16, հաստատում է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահությունը:

Հոդ. 97. Զինվորական կոլլեգիան կազմվում է նախագահից և Գերագույն Դատարանի անդամներից:

Այս կոլլեգիայի դատական նիստը կազմվում է նույնպես յերեք հոգուց՝ նախագահից և յերկու մշտական անդամից, վորոնց հրավիրելու կարգը սահմանում է կոլլեգիայի նախագահը:

Հոդ. 98. Գերագույն Դատարանի դատական կոլլեգիաների հա-

մար սահմանվում է մի քննչական մաս՝ կարեվորագույն գործերի քննիչներից:

Հոդ. 99. Զինվորական կոլլեգիայի ստորագրյալ տեղական զինվորական հիմնարկությունների կազմը նշանակելու և հաստատելու, հաշվետվության և նրանց գործունեության հսկողության կարգը՝ սահմանված է ստորեւի՝ հատուկ կանոնադրությամբ (գլուխ XVII):

Հոդ. 100. Գերագույն Դատարանի կարգապահական կոլլեգիան կազմվում է յերեք հոգուց՝ Գերագույն Դատարանի անդամներից, վորոնցից նախագահողը անպայման նախագահությունն անդամ պիտի լինի: Սրանց բոլորին էլ ընտրում է Գերագույն Դատարանի ընդհանուր նիստը:

ԳԼՈՒԽ XVI.

ԴԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ:

Հոդ. 101. Հանրապետական դատախազն իրավունք ունի կարգապահական կարգով գործ սկսելու Հ. Ս. Խ. Հ. դատական հիմնարկություններում ծառայող բոլոր անձանց դեմ առանց բացառություն:

Հոդ. 102. Գերագույն Դատարանի նախագահը և Գերագույն Դատարանում գործող Հանրապետության դատախազի ոգնականը իրավունք ունին կարգապահական գործ հարուցանելու բոլոր այն դատական աշխատակիցների դեմ, վոր աշխատում են Գերագույն Դատարանի իրավասության տակ գտնված հիմնարկություններում, այսինքն՝ Գերագույն Դատարանի կոլլեգիաների նախագահների ու անդամների, գլխավոր և նրանց համաստիճան դատարանների նախագահների և փոխ-նախագահների, գլխավորական դատախազների և Գլխավոր Դատարանում աշխատող բոլոր պաշտոնյաների դեմ:

Փանոսություն. — Գերագույն Դատարանի դատական բոլոր աշխատակիցների ու դատախազության աշխատակիցների կարգապահական գործերը յենթակա են Գերագույն Դատարանի կարգապահական կոլլեգիայի իրավասությանը:

Հոդ. 103. Գլխավոր Դատարանի նախագահը և Գլխավոր Դատարանում գործող դատախազն իրավունք ունին կարգապահական գործ հարուցանելու բոլոր այն պաշտոնյաների դեմ, վոր աշխա-

տում են Գլխավոր Դատարանին յենթակա հիմնարկություններում:

ԾԱճՈՐՈՒՅՈՒՆ.—Գլխավոր Դատարանում գործող կամ Գլխավոր Դատարանի իրավասության տակ գտնվող դատական աշխատակիցների և դատախազության աշխատակիցների կարգապահական գործերը յենթակա են Գլխավոր Դատարանի կարգապահական կոլեգիայի իրավասությանը՝ բացառությամբ Գլխավոր Դատարանի նախագահի և փոխ-նախագահների վերաբերյալ կարգապահական գործերի, վոր յենթակա յեն Գերագույն Դատարանի կարգապահական կոլեգիայի իրավասությանը:

Հոդ. 104. Գերագույն Դատարանի զինվորական կոլեգիայի նախագահն ու դատախազն իրավունք ունեն կարգապահական գործ հարուցանելու բոլոր այն պաշտոնյաների դեմ, վոր աշխատում են նրան յենթակա հիմնարկություններում:

Հոդ. 105. Կարգապահական գործ հարուցանելու առիթներն են.
ա) դատական աշխատակիցների այնպիսի հանցանքները, վարքը կամ գործողությունները, վոր թեպետ և պատժելի չեն քրեական որենքներով, սակայն անվայել են դատական գործիչների կոչմանն ու արժանապատվությանը և տեղի են ունեցել թե պաշտոնեական պարտականություններ կատարելիս և թե նրանցից դուրս.

բ) դատական աշխատակիցների վճիռների ու վորոշումների՝ Հ. Ս. Խ. Հ. որենքները ընդհանուր վոգուն և աշխատավոր մասսաների շահերին համապատասխան չլինելու պատճառով ջնջվելը Գերագույն Դատարանի կողմից:

Հոդ. 106. Կարգապահական պատասխանատվության կարգով կարող են նշանակվել հետեվյալ պատիժները.

ա) նկատողություն.

բ) հանդիմանություն.

գ) մի պաշտոնից այլ կամ ցած պաշտոնի տեղափոխելը.

դ) պաշտոնանկություն՝ վորոշ ժամանակ դատական պաշտոն վարելու արգելքով:

Հոդ. 107. Կարգապահական գործ կարելի է հարուցանել հանցանքը կատարելուց հետո վոչ ուշ քան մի տարվա ընթացքում:

Հոդ. 108. Կարգապահական գործը, յեթե հարուցված է մասնավոր անձի դանդատով, չի կարող կարճվել նույն գանգատավորի խնդրով:

Հոդ. 109. Մինչև կարգապահական կոլեգիայում գործը քննիչը, կոլեգիան հավաքում և անհրաժեշտ նյութերը, մեղադրյալից

բացատրություններ և պահանջում և կարող է գործի քննությունը հանձնարարել անհատապես կոլեգիայի անդամներից մեկին կամ Գլխավոր Դատարանի մի անդամի, կամ թե ժողովրդական դատավորի՝ ըստ պատշաճի:

Հոդ. 110. Գործի քննության որվա մասին կարգապահական կոլեգիան տեղեկացնում է մեղադրյալին, վոր կարող է ներկայանալ նիստին՝ անձամբ բացատրություններ տալու համար:

Հոդ. 111. Անհրաժեշտ դեպքերում կարգապահական կոլեգիան կարող է դատարան կանչել մեղադրյալին գործի քննության որը: Այդ դեպքում մեղադրյալի ներկայանալը պարտադիր է:

Հոդ. 112. Կարգապահական կոլեգիան կաշկանդված չէ վորիև ձեվականություններով, գործի քննության կարգը ամբողջովին նրանից և կախված, սակայն այն պայմանով, վոր դատախազի յեզրակացությունը լսելուց հետո՝ կոլեգիան անպատճառ խոսք տա մեղադրյալին:

Հոդ. 113. Կոլեգիայի անդամների մերժումը տեղի է ունենում ընդհանուր հիմունքներով:

Հոդ. 114. Կարգապահական կոլեգիայի վճիռները վորոշումներ են կոչվում, նիստի արձանագրությունը կազմվում է դատարանի տնորինական նիստերի արձանագրությունների ձեվով, մատնանշելով, թե ովքեր են մասնակցել նիստին:

Հոդ. 115. Գլխավոր Դատարանի կարգապահական կոլեգիայի վորոշումների դեմ կարելի է յոթն որվա ըվթացքում բողոք տալ Գերագույն Դատարանին: Գերագույն Դատարանի կարգապահական կոլեգիայի վորոշումները բողոքարկելի չեն:

Հոդ. 116. Յեթե կարգապահական կոլեգիան քննվող գործի մեջ քրեական պատժի յենթակայության նշաններ է գտնում, պարտական է դադարեցնել դատաքննությունը և գործը հանձնել քննիչ իշխանության ըստ իրավասության:

ՀԱՏՎԱԾ V.

ԳԼՈՒԽ XVII.

ՎՈՐՈՇ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԸ ՔՆՆՈՂ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԻՄՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդ. 117. Հ. Ս. Խ. Հ. զինվորական դատական հիմնարկությունները գործում են Արդարագատության ժողովրդական կոմի-

աարիատի և Հ. Ս. Խ. Հ. Գերագույն Դատարանի ընդհանուր վերահսկողութեան և վերահասութեան տակ: Զինվորական դատական հիմնարկութիւնները կազմակերպութիւնը և նրանց գործունեութեան մերձավոր հսկողութիւնը հանձնարարվում է Գերագույն Դատարանի զինվորական կոլլեգիային:

Հոդ. 118. Զինվորական դատական հիմնարկութիւններն են.

ա) Զինվորական շրջանների և ճակատների հեղափոխական զինվորական խորհրդներին առընթեր՝ զինվորական շրջանների կամ ճակատների տրիբունալներ:

բ) կորպուսներին առընթեր՝ կորպուսի զինվորական տրիբունալներ:

գ) դիվիզիաներին առընթեր՝ շրջանային տրիբունալների բաժիններ:

Պատերազմի ժամանակ կամ ռազմական գործողութիւնների շրջաններում, բացի դրանցից՝ կարող են հիմնվել բանակի կամ ամրացրած շրջանների զինվորական տրիբունալներ և գործող դիվիզիաներին առընթեր՝ կորպուսի զինվորական տրիբունալի բաժիններ: Գործող զինվորական տրիբունալների քանակը թե պատերազմի և թե խաղաղութեան ժամանակ՝ վորոշում է ամեն անգամ Գերագույն Դատարանի նախագահութիւնը՝ Գերագույն Դատարանի զինվորական կոլլեգիայի առաջարկութեամբ:

Հոդ. 119. Շրջանի կամ ճակատի զինվորական տրիբունալը կազմվում է նախագահից, փոխ-նախագահից և անդամներից, վորոնց ներկայացնում է զինվորական կոլլեգիան, շրջանի կամ ճակատի Հեղափոխական Զինվորական Խորհրդի կամ թե գործի հրամանատարի առաջարկած թեկնածուներից և հաստատում զինվորական կոլլեգիան իր հրամանով՝ Հանրապետութեան Զինվորական Խորհրդի հետ համաձայնութեան գալով:

Կորպուսի զինվորական տրիբունալը կազմվում է նախագահից և անդամներից, վորոնց հաստատում է Գերագույն Դատարանի զինվորական կոլլեգիան՝ շրջանի կամ ճակատի Հեղափոխական Զինվորական Խորհրդի առաջարկած թեկնածուներից:

Դիվիզիայի զինվորական տրիբունալը կազմվում է նախագահից ու փոխ-նախագահից և չորս անդամներից, վորոնց հաստատում է շրջանի կամ ճակատի զինվորական տրիբունալը:

Հոդ. 120. Գերագույն Դատարանի զինվորական կոլլեգիան

իրավունք ունի ամեն ժամանակ պաշտոնական անելու կամ այլ պաշտոնի տեղափոխելու զինվորական տրիբունալի նախագահին և անդամներին՝ տեղեկացնելով այդ մասին համապատասխան Հեղափոխական Զինվորական Խորհրդին:

Հոդ. 121. Կարգապահական դատավարութեան կարգով շրջանների կորպուսների և գորաբանակների զինվորական տրիբունալները ստորադրվում են Գերագույն Դատարանի կարգապահական կոլլեգիային, իսկ դիվիզիաների զինվորական տրիբունալները՝ շրջանների և կորպուսների կարգապահական կոլլեգիաներին:

Հոդ. 122. Ժողովրդական դատարանների աշխատավորական նստաշրջանները կազմվում են մի մշտական ժողովրդական դատավորից և դատարանի յերկու մշտական անդամից, մեկը տեղական Արհմիութեան ընտրութեամբ և մյուսը՝ տեղական աշխատանքի բաժնի ընտրութեամբ և գործում է նույն կարգով և կանոններով, ինչպես և ժողովրդական դատարանները:

Այն դավաճներում, ուր աշխատավորական գործերի համար հատուկ նստաշրջաններ չկան, այդպիսիները ընդհանուր կարգով քըննում է ժողովրդական Դատարանը:

Աշխատանքի տեսչին իրավունք է տրվում ամբաստանելու և բողոքարկելու վճիռներն ու վորոշումները:

Հոդ. 123. Աշխատավորական նստաշրջանի վճիռների դեմ վրձնաբեկ գանգատ է տրվում սովորական կարգով Դիվիզիայի Դատարանին, վոր մերձավոր հսկողութիւն ունի ժողովրդական դատարանների աշխատավորական նստաշրջանների վրա (կանոնագրերի 4 հոդ.)

Հոդ. 124. Աշխատանքի ժողովրդական կոմիտեարին, ինչպես և դատախազութեան մարմիններին իրավունք է տրվում պահանջել ամեն մի քործ, վոր քննել է աշխատավորական նստաշրջանը և վորի վճիռը կամ վորոշումը որինական ույժ է ստացել, և բողոքարկել այդպիսիները հսկողութեան կարգով Գերագույն Դատարանի քընական կամ քաղաքացիական վճառեկ կոլլեգիաների առջև:

Հոդ. 125. Պետական մարմինների միջով ծագող հողի և ստացվածքի վերաբերյալ վեճերի քննութեան համար կազմվող հողային և իրավարար հանձնաժողովները գործում են իրենց կանոնադրութիւնների համաձայն:



Վերջում Հայաստանի Կ. Գ. Կ. ի III նստաշրջանի՝
Հ. Ս. Խ. Հ. Գաղափարական կազմված լիցենզիայի հաս-
տատված ժամանակ: 1

**ԿԱՆՈՆԱԳԻՐԲ Գ. Ս. Խ. Հ. ԳԱՏԱՐԱՆԱԿԱԶ-
ՄՈՒԹՅԱՆ**

Հ Ա Տ Վ Ա Ծ I

Գլուխ	I.	Հիմնական կանոններ	1—10	2—4
»	II.	Ժողովրդական դատավորների ընտրու- թյան ու հետ կանչելու և ժողովրդա- կան դատարանների շրջանների մասին	11—14	4—5
»	III.	Ժողովրդական ատենակալների և նրանց դատական պարտականություններ կատարելու հրավերելու կարգի մասին	15—27	5—8
»	IV.	Ժողովրդական դատարանի զիջանաժողով և ժողովրդական դատավորի հաշվե- տված լիցենզիայի	28—30	8
»	V.	Ժողովրդական քննիչների մասին	31—37	8—9
»	VI.	Պաշտպանների կոլեկիայի մասին	38—43	10—11
»	VII.	Գաղափարական կատարածությունների մասին	44—50	11—13
»	VIII.	Պետական նոտարիատի մասին	51—57	13—14

Հ Ա Տ Վ Ա Ծ II

Գլուխ	IX.	Գլխավոր Գաղափարական կազմի մասին	58—63	14—16
»	X.	Գլխավոր Գաղափարական ֆուկսիաները	64—70	16—18
»	XI.	Գլխավոր Գաղափարական լիցենզիաները	71—73	18—19

Հ Ա Տ Վ Ա Ծ III

Գլուխ	XII.	Պետական դատախազություն	74—87	19—23
-------	------	----------------------------------	-------	-------

Հ Ա Տ Վ Ա Ծ IV

Գլուխ	XIII.	Հ. Ս. Խ. Հ. Գերագույն Գաղափարական մասին	88—90	23—24
»	XIV.	Գերագույն Գաղափարական նախագահու- թյան և ընդհանուր նիստի ձևադրու- թյան սահմանները	91—92	24—26
»	XV.	Գերագույն Գաղափարական վճարելի ու դա- տական կոլեկիաների կազմը	93—100	26—27
»	XVI.	Գաղափարական աշխատակիցների կարգադրու- թյան պատասխանատվության կարգը	101—116	27—29

Հ Ա Տ Վ Ա Ծ V

Գլուխ	XVII.	Վերջ կատարողների գործեր քննող դատական հասույթի հիմնարկություն	117—125	29—31
-------	-------	--	---------	-------

Ո Ի Ղ Ղ Ե Լ Ի Ք

Եջ Հոդ.

Տպագրված է

Պիտի լինի

5 19

... Արդարադատութեան առաջարկութեան հիման վրա կամ առաջարկութեան գործադիր կոմիտեյի ..

... Արդարադատութեան ժողովրդական կոմիտեյի-ատի առաջարկութեան հիման վրա կամ Գործադիր կոմիտեյի...

9 33, 4. 7

Ժամանակ.

Ժամանակ

10 40

անդամները

անդամները

12 44

Դատավորութեան

Դատավորութեան

14 53

բաժնին

բաժնիք

14 —

Պիտի Գործադիր Գործում է.

Հոդ. 58. Պիտի Գործադիր Գործում է.

16 —

Գլխի X

Գլխի X

27 102

Գլխի և նրանց համատեղման դատարանների

Գլխի և նրա համատեղման դատարանների